ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՎԱ-ԱԱՏՄ-ՀՄԱԱՇՁԲ-20/14-2»

«21» 12 2020թ.

ք. Երևան

Վարչապետի աշխատակազմն ի դեմս Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Վ. Պապիկյանի, որը գործում է Աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Առաքել» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Առաքելյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված առողջապահության և աշխատանքի տեսչական մարմնի կարիքների համար շենքերի շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 4 օրացույցային օր:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա

Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր (առնվազն 365 օրացուցային օր): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.4 Եթե պայմանագրի 4.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝

վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 4650882 (չորս միլիոն վեց հարյուր հիսուն հազար ութ հարյուր ութսուներկու) ՀՀ դրամ, որից 775147 (յոթ հարյուր յոթանասունհինգ հազար հարյուր քառասունյոթ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է դիտանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ

...ությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ...անված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների ...ազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10

Սույնպայմանագրիկապակցությամբծագածվեճերըլուծվումենբանակցություններիմիջոցով:Համաձայնությունձեռքչբերելուդեպքումվեճերըլուծվումենդատականկարգով:

8.11Սույնպայմանագիրըկազմվածէ 6 էջից, կնքվումէերկուօրինակից, որոնքունենհավասարազորիրավաբանականուժ, յուրաքանչյուրկողմինտրվումէմեկականօրինակ:Սույնպայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվումենպայմանագրիանբաժանելիմասը:

8.12

ՍույնպայմանագրիհետկապվածհարաբերություններինկատմամբկիրառվումէՀայաստանիՀանրապետությանիրավունքը:

8.13 Սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո պայմանագրով սահմանված պատվիրատուի իրավունքները և պարտավորությունները փոխանցվում են առողջապահության և աշխատանքի տեսչական մարմնին՝ բացառությամբ ֆինանսական գործառույթների՝ հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ և 18-րդ հոդվածների պահանջները:

9. ԿՈՂՄԵՐԻՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸԵՎՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Կարչապետի աշխատակազմ ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն, 1 ՀՀ ՖՆ գանձապետական վարչություն Հ/Հ 900011024057 ՀՎՀՀ 02505564	ԱՌԱՔԵԼՍՊԸ ՀՎՀՀ 09802931 Սյունիքիմարզ,ք.Սիսիան,Գայի 13/12 ՀՀ 220333330417000 ԱԿԲԱբանկԲԲԸՍիսիանմ/6 տնօրենՀրաչԱռաքելյան
/ստորագրություն/ Կ.Տ	/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված թիվ 1

<<21>> << 12 >> 2020 թ. կնքված

ՎԱ-ԱԱՏՄ-ՀՄԱՇՁԲ-20/14-2 ծածկագրով պայմանագրի

ԾԱԿԱԼԱԹԵՐԹ - ՆԱԽԱՀԱՇԻՎ

Սյունիքի մարզի ,Սիսիանի քաղաքային համայնքի,Կամոյի փողոց թիվ 5 հասցեում գտնվող անշարժ գույքի վերանորոգան

NN	Աշխատանքի նկարագիրը	Չ/մ	Քանակ	Միավ. գինը հազար դրամ	Ընդամենը հազար դրամ
1	3	4	5	6	7
	քանդման աշխատանքներ				
1	փայտե պատուհանների ապամոնտաժում /նյութի հետ վերադարձով/	մ^2	1.2	2.530	3.04
2	Փայտե դռների ապամոնտաժում/նյութի հետ վերադարձով/	մ^2	3.1	1.464	4.54
3	դռան բացվածքի բացում 100մմ հաստ. խարամաբետոնե միջնորմներում	մ^2	2.40	1.000	2.00
4	300մմ հաստ. բետոնե պատի քանդում	մ^3	0.90	22.000	19.80
5	կերամիկականսալիկներով հատակների քանդում	մ^2	5.3	0.500	2.65
6	ց/ավազային հարթեցուցիչ շերտի քանդում 30մմ հաստությամբ	մ^2	5.30	0.500	2.65
7	Բետոնե հատակների քանդում	մ^3	1	0.700	0.70
8	մանրատախտակե հատակների քանդում	մ^2	2.6	0.700	1.82
9	Հաղճասալերի քանդում	մ^2.	23.0	0.700	16.10
10	Պատերի և առաստաղների գաջե սվաղի քանդում	մ^2	15.2	0.230	3.50
11	Ապամոնտաժվող դռան և պատուհանի շեպերի սվաղի քանդում	մ^2	3.2	0.320	1.02
12	Ակոսների փորում պատերում	մ	206.0	0.368	75.81
13	Պատերի և առաստաղների մաքրում հին ներկից	մ^2	561.7	0.200	112.34
14	Ձեռուցման մարտկոցների ապամոնտաժում / նյութի հետ վերատարծով /	հատ	12.0	1.200	14.40
15	Մետաղական խողովակների ապամոնտաժում Φ 15մմ / նյութի հետ վերատարծով /	մ	42.0	0.579	24.32

16	Շինության մաքրում քանդված շին.նյութերից և աղբից	տ	4,5	2,000	9,00
17	Քանդված շին.նյութերի և աղբի բարձում ա/մեքենաները ձեռքով	տ	4,5	1,000	4,50
18	Նույնի տեղափոխում ա/մեքենաներով 3 կմ հեռավորության վրա	տ	4,5	1,000	4,50
	Ընդամենը				302,68
	Ընդամենը տոկոսներով				8,40
	Պատեր				
1	Դռան բացվածքի փակում 400*200*100 մմ չափերի թեթև բետոնե բլոկներով/2մ2/	մ³	0,20	35,000	7,00
	Ընդամենը				7,00
	Ընդամենը տոկոսներով				0,18
	Դռներ				
1	Մետաղապլաստե , բլոկով , սպիտակ , 60 մմ հաստ . , ապակեփաթեթով 4+4 մմ , հայկակ. պրոֆիլ դռների տեղադրում	մ²	3,57	41,500	148,16
2	Մետաղապլաստե , բլոկով , սպիտակ , 60 մմ հաստ . , խուլ , հայկական պրոֆիլ դռների տեղադրում	մ²	1,89	41,000	77,49
3	Շվեցարի տեղադրում	հատ	1,0	22,000	22,00
4	Փայտե դռների փականների տեղադրում	հատ	13,0	4,500	58,50
	Ընդամենը				306,15
	Ընդամենը տոկոսներով				8
	Պատուհաններ				
1	Մետաղապլաստե , բլոկով , սպիտակ , 60 մմ հաստ., ապակեփաթեթով 4x4 մմ , պրոֆիլ /արտերկիր / պատուհանների տեղադրում քարե պատերումչբացվող փեղկով	մ²	1,25	31,000	38,75
2	Պատուհանների կոտրված ապակիների փոխարինում	մ²	4,6	5,500	25,30
	Ընդամենը				64,05
	Ընդամենը տոկոսներով				1,7

	Հատակներ				
1	Ցեմենտավազային հարթեցնող շերտի կառուցում B 7.5 դասի ցեմենտե շաղախով 30 մմ հաստությամբ	մ²	12,70	1,500	19,05
2	Լամինատե հատակների կառուցում 8մմ հաստությամբ / ներառյալ ապունգը /	մ²	10,5	5,600	58,80
3	Հատակների իրականացում 410*410 մմ կերամիկական սալիկներով	մ²	2,20	10,500	23,10
4	Մանրատախտակե հատակների վերանորոգում	մ²	2,60	8,500	22,10
5	Մանրատախտակե հատակների հղկում	մ²	130,8	0,650	85,02
6	60 մմ լայնությամբ լամինացված շրիշակների տեղադրում / ներառյալ միացման դետալները /	մ	11,90	1,000	11,90
	Ընդամենը				219,97
	Ընդամենը տոկոսներով				5,8
	Ներքին հարդարման աշխատանքներ				
1	Պատերի ցեմենտավազե սվաղի վերանորոգում 20 մմ հաստությամբ	մ²	2,70	3,000	8,10
2	Պատերի սվաղի վերանո-րոգում գաջե շաղախով	մ²	32,0	2,800	89,60
3	առաստաղների սվաղի վերանորոգում գաջե շաղախով	մ²	3,8	5,200	19,76
4	մուտքի դռան շեպերի լավորակ սվաղում գաջի շաղախով	մ²	3,2	4,800	15,36
5	պատերի բարձրորակ սվաղում գաջի շաղախով	մ²	27,0	2,600	70,20
6	պատերի սոսնձաներկում լատեքս ներկով ծեփամածկումով	մ²	477,0	1,870	891,99
7	առաստաղի սոսնձաներկում լատեքս. ներկով ծեփամածկումով	մ²	153,4	1,800	276,12
8	փայտե դռների յուղաներկում 2 շերտ	մ²	59,80	1,800	107,64
9	պատուհանների յուղաներկում 2 շերտ	մ²	63,80	2,500	159,50
10	մանրատախտակե հատակների լաքապատում	մ²	130,8	0,700	91,56
	Ընդամենը				1729,83
	Ընդամենը տոկոսներով				42,9

	Արտաքին հարդարում				
1	2,5x1,6x0,1 մ չափերով երկաթբետոնե սալվածքի իրականացում B 15 դասի բետոնով	մ³	0,40	47,000	18,80
	Ընդամենը				18,80
	Ընդամենը տոկոսներով				0,5
	Ներքին ջրամատակարարում				
1	Պոլիպրոպիլենային խողովակների մոնտաժում ալյումինե շերտով Φ 20x3 մմ / ձևավոր մասերի տեղադրումով և հիդրավլիկ փորձարկումով /	գծմ	24,0	1,400	33,60
2	Փական Φ 20 մմ կեսպտույտ PPR	հատ	4	4,400	17,60
3	D= 16 մմ լատունե կցամասի տեղադրում / դրսի պարույր /	հատ	4	1,600	6,40
4	D= 16 մմ ամերիկանկայի տեղադրում / ներսի պարույր //	հատ	4	1,600	6,40
5	անցումներ PPR	հատ	12	0,150	1,80
6	եռաբաշխիչ PPR	հատ	4	0,150	0,60
7	անկյունակ PPR	հատ	4	0,150	0,60
	Ընդամենը				67,00
	Ընդամենը տոկոսներով				1,8
	Ներքին կոյուղի				
1	Զուգարանակոնք կերամիկական	կոմպ	2	35,000	70,00
2	Լվացարան կերամիկական ոտնակով	կոմպ	2	22,000	44,00
	Ընդամենը				114,00
	Ընդամենը տոկոսներով				3
	Ներքին լուսավորություն				
1	Խմբային լուսավորության վահանակ 6 մոդուլի համար	հատ	1	19,000	19,00

2	Միաֆազ ավտոմատ անջատիչ 63Ա	հատ	1	4,200	4,20
3	Միաֆազ ավտոմատ անջատիչ 40Ա	հատ	2	4,200	8,40
4	Միաֆազ ավտոմատ անջատիչ 32Ա	հատ	1	4,000	4,00
5	Միաֆազ ավտոմատ անջատիչ 25Ա	հատ	2	4,000	8,00
6	Պղնձե հաղորդալարի անցկացում փակ եղանակով ՊՊՎԳ 2 x 4 մմ^2	մ	80,00	0,800	64,00
7	Պղնձե հաղորդալարի անցկացում փակ եղանակով ՊՊՎԳ 2 x 2.5 մմ^2	մ	450,00	0,650	292,50
8	Պղնձե հաղորդալարի անցկացում փակ եղանակով ՊՊՎԳ 2 x 1.5 մմ^2	մ	50,00	0,480	24,00
9	Պղնձե հաղորդալարի անցկացում փակ եղանակով ՊՎ-3 2.5 մմ^2	մ	530,00	0,450	238,50
10	Պղնձե հաղորդալարի անցկացում փակ եղանակով ՊՎ-3 1.5 մմ^2	մ	50,00	0,400	20,00
11	Առաստաղի / LED / լուսադիոդային լամպերի տեղադրում 24 վտ հզորութ.	հատ	27	8,400	226,80
12	Առաստաղի / LED / լուսադիոդային լամպերի տեղադրում 9 վտ հզորութ.	հատ	5	4,700	23,50
13	Վարդակ մեկտեղանի հողանցումով	հատ	9	1,400	12,60
14	Վարդակ երկտեղանի հողանցումով	հատ	17	1,800	30,60
15	Անջատիչ մեկ ստեղնավոր	հատ	1	1,600	1,60
16	Անջատիչ երկ ստեղնավոր	հատ	11	1,900	20,90
17	տուփ անջատիչների և վարդակների համար	հատ	55	0,110	6,05
18	բաժանման տուփ	հատ	15	0,110	1,65
19	4-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ^3	1,2	4,800	5,76
20	Հողանցման էլեկտրոդների տեղադրում 50x 50x 5 մմ պողպատյա անկյունակից l = 1,5 մ	հատ	4	4,500	18,00
21	Հողանցման պողպատաշերտ 40x3 մմ ժապավենից	մ	18,0	0,800	14,40
22	բնահողի հետլիցք ձեռքով	մ^3	1,2	1,500	1,80
	Ընդամենը				1046,26

	Ընդամենը տոկոսներով				27,72
	Ընդամենը				*3875,735*
	ԱԱ< 20%				*775,147*
	Ընդամենը				*4650,882*

* Կապալառուն աշխատանքները կատարում է << Սյունիքի մարզ, Ք. Սիսիան, Կամոյի 5 հասցեում:

Պատվիրատու

Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն, 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 90001102405
ՀՎՀՀ 02505554

Կապալառու
ԱՌԱՔԵԼ ՍՊԸ
ՀՎՀՀ 09802931
Սյունիքի մարզ,ք.Սիսիան,Գայի 13/12
ՀՀ 220333330417000
ԱԿԲԱ բանկ ԲԲԸ Սիսիան մ/ճ

տնօրեն Հ.Պապբեյան

Հավելվածթիվ 2
«21» 12 2020թ. կնքված
«ՎԱ-ԱԱՏՄ-ՀՄԱՇՁԲ-20/14-2»ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆԳՐԱՖԻԿ

Սյունիքի մարզի ,Սիսիանի քաղաքային համայնքի, Կամոյի փողոց թիվ 5 հասցեում գտնվող անշարժ գույքի վերանորոգմ ան

N ը/կ	Կապալառուիկողմիցկատարվելիքաշխատանքների առանձինտեսակների անվանումներ	Աշխատանքներիկատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
3	Շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	4 օրացույցային օր
ԸՆԴԱՄԵՆԸ		Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	4 օրացույցային օր

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն, 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 90001024057
ՀԿՀՀ 02505554

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

ԱՌԱՔԵԼՍՊԸ
ՀՎՀՀ 09802931
Սյունիքիմարզ,ք.Սիսիան,Գայի 13/12
ՀՀ 220333330417000
ԱԿԲԱբանկԲԲԸՍիսիանմ/ճ
տնօրենՀրաչԱռաքելյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«21» 12 2020թ. կնքված
«ՎԱ-ԱԱՏՄ-ՀՄԱՇՁԲ-20/14-2»ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումներիպլանովնախատեսվածմիջանցիկծածկագիրը՝ ըստԳՄԱդասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
3	45461100-6	Շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	4650882	4650882

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողականկարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն, 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011024057
ՀՎՀՀ 02505554

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊ ԱԼԱՌՈՒ

ԱՌԱՔԵԼ, ՍՊԸ
ՀՎՀՀ 09802931
Սյունիքի մարզ,ք.Սիսիան,Գայի 13/12
ՀՀ 220333330417000
ԱԿԲԱ բանկ ԲԲԸ Սիսիանմ/ճ
Տնօրեն Հրաչ Առաքելյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
« 21 » 12 2020 թ. կնքված
«ՎԱ-ԱԱՏՄ-ՀՄԱՇՁԲ-20/14-2» *ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
«21» 12 2020 թ. կնքված
«ՎԱ-ԱԱՏՄ-ՀՄԱԱՇՁԲ-20/14-2» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն